ԵԱՀԿ-ն, Եվրոպայի խորհուրդն ողջունում են վերջերս փոփոխված հանրահավաքների մասին օրենքը բարեփոխելու համաձայնությունը

Վարշավա/Ստրասբուրգ, 21.04.2008թ.

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովն այսօր ողջունեցին Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչների հետ վերջերս փոփոխված հանրահավաքների մասին օրենքը բարեփոխելու կապակցությամբ ձեռք բերված համաձայնությունը:

«Այս համաձայնագիրը դիտարկում ենք որպես Հայաստանի իշխանությունների և ԺՀՄԻԳ-ի ու Վենետիկի հանձնաժողովի միջև հանրահավաքների օրենսդրական կարգավորման գործում երկարատև համագործակցության ևս մեկ քայլ», - ասել է ԺՀՄԻԳ-ի տնօրեն, դեսպան Քրիսթիան Շթրոհալը:

«Վենետիկի հանձնաժողովն ու ԺՀՄԻԳ-ն ակնկալում են ստանալ նոր փոփոխությունների նախագծերը և պատրաստ են քննարկել դրանք համապատասխան միջազգային չափանիշների տեսանկյունից», - ավելացրել է Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Ջանի Բուքիքիոն:

Մարտի 28-ին հրապարակված իրավական կարծիքում ԺՀՄԻԳ-ն ու Վենետիկի հանձնաժողովը լուրջ մտահոգություններ հայտնեցին մարտի 1-2-ի բռնություններից անմիջապես հետո Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին օրենքում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Ապրիլի 15-ից 16-ը Երևան այցի ժամանակ ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Ազգային ժողովի խոսնակ Տիգրան Թորոսյանի, Արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանի, ՀՀ նախագահի խորհրդական Գևորգ Մհերյանի հետ:

Համաձայնություն ձեռք բերվեց վերացնել կամ բարեփոխել խաղաղ հավաքները, հակտապես ինքնաբուխ հավաքները, սահմանափակելու համար ներմուծված փոփոխությունները: Այս բարեփոխումները օրենքը կմոտեցնեն իր սկզբնական բովանդակությանը, որը դրական էր գնահատվել ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Ըստ ձեռք բերված համաձայնության, նոր փոփոխությունները կմշակվեն և կներկայացվեն ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի ուսումնասիրությանը: ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի փորձագետներն առաջարկեցին, որ բավականաչափ ժամանակ տրամադրվի փոփոխությունների հանրային քննարկումների համար: